

Աղբատները վերցրնենք աշխարհիկս :

Ռարիզու շրջակայից զուարձալի գեղերուն մէկը պտըրտելու ելած էի առաւտօտ մը, և կարդալով կը քալէի : Ձեռքի գիրքս նոր հրատարակուած գրուածք մ'էր աղքատութեան վրայօք . որուն մէջ հեղինակը նոր դրութեամք մը կը հաստատէր թէ ասկէ ետև աղքատութիւն պիտի չմնար, և թէ որ մնար ալ նէ՝ մարդկանց ացքէն հեռու պիտի քաշուէր : Ի՞աղքաց մէջ չափահաս, առողջ և կարող մարդկանց համար աշխատելու տեղուանք միշտ բաց պիտի ըլլային, և հիւանդանոցները՝ վատառողջից, տղայոց և ծերոց պիտի մնային . ալ պիտի չտեսնուէին ցնցոտիք հագած և տժգոյն դէմքեր փողոցներու մէջ . թշուառներու տեսութիւնը որ քաղաքացւոց կամ արհամարհանքն և կամ տիրութիւնը կը շարժէր՝ պիտի վերցուէր, և ապագայից մարդիկն ամէն դի կարգաւորութիւն, երջանկութիւն և բարեթաստութիւն պիտի տեմնային :

Երբոր ասանկ զբաղած գեղին առաջին տներուն մօտեցայ, աղաչաւոր ձայն մը ականջիս զարկաւ . աչքս վեր վերուցի և մուրացկաններ տեսայ . ողորմելի զգեստով ծածկուած աղջիկ մը, որ երկայն ու ձեան պէս ձերմակ մօրուքով կուրի մը կ'առաջնորդէր : Ի՞ս այն տը խուր տեսարաններէն մէկն էր, որ մատենագիրը կը խոստանար անհետ ընելու : Ի՞սանց մտիկ ընելու՝ լսեցի ձայնը, առանց նայելու՝ տեսայ զանոնք, և առանց կենալու ալ անցայ քովերնէն, ընթերցմունքս առաջ տանելով : Երբոր գիրքը լմնցաւ և գրապանս դրի, միտքս հանդիպած աղքատացս վրայ գնայ, զորոնք հազիւ տեսած էի և որոնք հիմա որոշ տեսնուեցան : — “ Այնդրեմ, ողորմութիւն,, ըսին երկու խոնարհ ձայներ, մէկը մաշած և տիրուր, իսկ միւսն՝ անոյշ և սուր : Դիտեցի ծերունի կուրին վտիտ դէմքը և ձերմակ մազերն, որ արդէն պատկառանքի արժանի էին, և խեղճ՝ աղջկան գունաթափ

երեսն՝ որ կարծես թէ ժպիտ մը կը փնտըռէր . թշուառութիւնն ազատ համարձակ նստեր էր երկուքին ձակտին վրայ :

Դ'ամբասս առաջ տանելով, ջանացի հեռացընել մտքէս այս պատկերը, բայց անդադար կը նորոգուէր երեակայութեանս առջին : Պարապ տեղը ձամբաները պատող ամարաստուն աղուոր պալատներուն վրայ կը նայէի . պարապ տեղը անոնց հովանաւոր անտառիկները, ծաղկալից պարտէցներն ու մաքուր ձամբաները կը դիտէի . այն ամէն վայելութիւններն, որոնց վրայ ամենալին տիրուր բան մը չէր երեար, չէր կրնար ցրուել սրտիս վրայ տպաւորուած ծանրութիւնն ու տագնապը : Ո՞իշտ ներսէս ձայն մը կը խօսէր ինծի՝ որ եթէ չնչին ողորմութիւն մը ծեր մուրացկանին գլխարկին մէջ նետելու ըլլամ, և անոյշ խօսքով մը, անոյշ նայուածքով մը կարեկցութիւնս յայտնեմ աղջկանը, շատ աւելի պիտի ուրախանայ սիրտս անկէ՝ քան թէ այն ամէն գեղեցիկ տեսարաններէն, որոնք հանգստութիւն և երջանկութիւն միայն կը սփուէին աչքիս առջև :

Դ'մարաստանց սահմանէն ելայ, և գեղացիներէ բնակուած նեղ փողոց մը անցայ . պզտի հրապարակի մը մէջ, փայտէ խաչի մը չորս կողմը բազմութիւն մարդկան ժողվուած էին : Ի՞ս ալ մօտեցայ, և կանանց ու երիտասարդաց մէջ նորէն ծերունի մուրացկանն և իր զաւակը տեսայ, որ քարէ տատիճանի մը վրայ նստած էին : Ո՞է կը տաք ապուրով լցուն պնակ մը բռնած էր ձեռքը, մէկալին գոփնոցին մէջ կեռաս կար : Դէքին իր վարքը կը պատմէր մը տադիր ունկնդրաց, գլխէն անցած դըքքաղցութիւնները՝ թէ թնչպէս տասը տարի առաջ վառոգարան մը բռընկելով՝ վնասած էր իր առողջութիւնը՝ գարձեալ իր հարսին և որդւոյն և մէկ աղջկանը տասնըհինգ օրուան մէջ ժանտամահով մեռնիլը, որոնցմէ զատ բարեկամ չունէր երկրիս վրայ, բաց ՚ի իր միւս աղջիկէն, որ իրեն հետ թշուա-

ռութեան համը կ'առներ . գթութեան ձայներ ամէն մէկ վայրկեան մուրացկանին պատմութիր կ'ընդհատէին : Վիշտ ատենէն անկեղծ մտերմութեամբ մը կապուեցան այս աղքատն ու իր բարերարները . ամէն մարդ ուրախութիւն մը կը զգար անոր այնպէս ախորժակով ուտելը տեմնալով : Իսկ ես , հազիւ կը ըցայ առանց մէկու մը տեմնալուն ողորմութիւնս տալ : Ի՞յն միջոցին շատ մը աղջկունք դեռահասակ մուրացկանին չորս կողմն առած՝ իրենց հացէն անոր ալ մաս մը կը հանէին , անունը կը հարցընէին , ու ընտանեքար հետը կը խօսէին . ուրախացաւ խեղձը՝ տեմնելով որ կրնար ինքն ալ մարդու կարգ սեպուելու իրաւունքն ունենալ , և իր ուրախութիւնը կէս մը լացով , կէս մը ծիծաղով կը յայտնել դէմքին վրայ :

Ի՞յս սրտաշարժ տեսարանը միտքս բացաւ , ու հետեւեալ շշմարտութիւնն առջևս հանեց . Վզքատութիւնն ու աղքատները երկրիս վրայէն վերցընելն Իստուծոյ թողունք , ըսի . բայց որովհետեւ կան , մեծ անգիտութիւն է զանոնք բռնադատութեամբ չորս պատի մէջ փակելը : Վզքատը սննդեան միայն կարօտչէ , այլ նաև միսիթարութեան գթոյ և եղբայրական ցոյցերը՝ կտոր մը հացէն աւելի հարկաւոր են անոր : Իստուած արդեօք կամաւ խառնած չէ երջանիկները թշուառաց հետ , որպէս զի առջններն երկրորդներուն աղի արցունքները սրբելու միսիթարութիւնն ունենան , միանգամայն և յիշեն թէ ձրի կը վայելեն երջանկութիւնը : Ա ըշտագին սրտի մը՝ մերկ անկելանոցին մէջ թաղած հեծութիւններն ինչ օգուտ ունին մարդկութեան . արձագանգ մը չգտնալին զատ՝ կը դառնան դարձեալ այն սիրտն՝ ուսկից ելան , և աւելի դառնութեամբ կը հեծուն անոր վրայ : Իսկ այն տառապեալն , որուն բնակարանին ծածքը թէպէտ երկինքն է , և անկողին՝ պինդ քարերը , այլ գոնէ կը գտնայ մէկը՝ որ իր վշտերուն վրայ խօսել կու տայ իրեն , այնպիսւոյն թշուառութիւնը կիսով մասամբ . կը թէ-

թենայ . դեռ բարիք մը չտեսած դիմացինէն բարերար կը կանչէ զանիկայ , և իր կորուսած կամ հայրը կամ մայրը կամ եղբայրն՝ ի նմա կենդանացած կը գտնէ : Վզքատն սփոփովին՝ իր սիրտն ալ կը սփոփի , և աստուածային գթութենմանող կ'ըլլայ : Ի՞յո , Վստուծոյ օրչնութիւնն են աղքատները . անոնց ձեռքով կ'ազնուանայ մարդուս հոգին : Կեցցէ ուրեմն աղքատութիւնը :

ԺԱՄԱՆԱԿԱՒՑ ՀԵՂԻՆԱԿ ՄՅ.

### Նոր-Գալետոնիացիք :

Դալետոնիան , Ովկիանեան կղզեաց գլխաւորներէն մէկն է և Վէստրալիոյ մասն կը համարուի : Դեռ ժողովուրդը վայրենաբարոյ ըլլալուն աշխարհագրական տեղեկութիւններ չունինք վրանին : Ի՞յս հետեւեալ ծանօթութիւններս զոր պիտի տանք իրենց բարուց և սովորութեանցը վրայ , ուղղակի քարոզ չի մը թղթերէն առնուած են :

Դալետոնիա թէպէտ և այնչափ բարեբեր երկիր մը չէ , բայց կրնար բնակչաց պիտոյբը լեցընել , թէ որ անդադար պատերազմներու և տօներու յաճախութիւններն արգելք չըլլային , զորոնք դեռ ևս չկրցան դագրեցընել քարոզիչք :

Ի՞յս պատերազմներուս մէջ խիստ քիչ անձնական կամ կենաց վնաս կը հանդիսի . բայց ընդհակառական աւարառութիւնք , կրակ տալ իրարու բնակութեանը ու յափշտակութիւնք ստէպ կը պատահին . անսանկ որ շատ անգամ յաղթողն՝ յաղթուողէն աւելի վնաս կը կրէ , և պարտական է կերակրել իրեն դաշնակիցները :

Պատերազմներն ամենաաջնջին պատճառներէ առաջ կու գան , և շատ անգամ կանայք կ'ըլլան պատճառ : Վնդհանրապէս երբ ցեղ մը կը զօրանայ , առիթ մը կը փնտրուէ ատենօք իրեն դէմ անիրաւութիւն ընողէն վրէ ժինդրե-